ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՎՃՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Հ. Շ. ՄՈՔՈՅԱՆ

Հասարակության լինելության գործընթացը և մարդու ակտիվության պրոբլեմն այսօր ավելի անհրաժեշտ իմաստ և կարևորություն է ձեռք բերում, քանի որ սոցիալական հիմնային նախադրյալների առաջադիմության համար մղվող պայքարը միաժամանակ պայքար է հանուն անհատի բազմակողմանի զարգացման բարենպաստ պայմանների։

Սոցիալական մատերիայի՝ հասարակության համընդհանուր զարգացման միտումը համասոցիալական օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը կախված է սուբյեկտիվ գործոնի հասունության աստիճանից և համապատասխան աճից։ «...Առանց հասարակական շինարարության մեջ ժողովրդի նոր խավեր ներգրավելու,— գրում է Վ. Ի. Լենինը,— առանց մինչև այժմ քնած լայն մասսաների ակտիվությունն արթնացնելու, որևէ հեղափոխական վերափոխության մասին խոսք անգամ լինել չի կարող»[1]։

Մի կողմից, հասարակական հարաբերությունները ռեալ անհատների վարքի և գործունեության դրսևորումն են համապատասխան ձևի մեջ, իսկ մյուս կողմից՝ նրանք հասարակական հարաբերությունների և՛ սուբյեկտն են, և՛ կրողը, որովհետև վերջին հաշվով մարդկանց սոցիալական էության մեջ է, որ իր հարաբերական ակտիվությունն է ստանում տվյալ հասարակական սիստեմն ընդհանրապես։

Դիալեկտիկայի միջուկը «...հակադրությունների միասնության մասին ուսմունքն է», այսինքն՝ «...հակասությունների ուսումնասիրումը հենց իրենց առարկաների էության մեջ», որը գնալով առաջնակարգ նշանակություն է ստանում նաև մարդու բազմակողմանի ուսումնասիրման գործում։ Մարդու այս կամ այն աստիճանի ակտիվությունն օրինաչափ երևույթ է, որը միաժամանակ ենթադրում է պասիվության դրսևորում դիմադրության մեջ, այսինքն՝ ակտիվության որոշակի տեսակ և որոշակի սոցիալական գործունեություն, որը հատուկ է միայն մատերիայի ամենաբարդ՝ սոցիալական ձևին, հասարակությանը։ Մարդը բարդ և դինամիկ սոցիալական երևույթ է, հասարակական կյանքի հարաբերականորեն ինքնուրույն բնագավառի ակտիվ, ստեղծագործ էակ, սոցիալ-պատմական և մշակութային արարումների սուբյեկտ, հասարակության զարգացման պայման և նպատակ, մարքս-լենինյան տեսական հետազոտության մշտական օբյեկտ։ Եվ քանի որ սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման պրակտիկան այսօր կարիք է զգում մարդու տեսական մոդելի կառուցմանը, ուստի հարկավոր է ավելի շատ ուշադրություն դարձնել անհատի սոցիալական հատկանիշների ձևավորմանը, կատարելագործմանը և խորացմանը։

Ակտիվության պրոբլեմի հետազոտության հրատապությունն անհրաժեշտարար պայմանավորված է վերակառուցման և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում մարդկային գործոնի իրացման հետ։ Մարդու ակտիվության պրոբլեմն իր մշակումն է ստացել սովետական հասարակագետների կողմից՝ անհատի գիտական կոնցեպցիայի զարգացմանը և կատարելագործմանը զուգընթաց[2]։

---

[1] *Վ. Ի. Լենին, նույն, հ. 36, էջ 191։*

[2] *Տե՛ս* М. С. Горбачев, Перестройка и новое мышление для нашей страны и для всего мира. М., 1988; Е. М. Бабосов, XXVII съезд КПСС о стратегии ускорения

Իրական սոցիալիզմի պայմաններում սովետական յուրաքանչյուր քաղաքացի, անկախ հասարակական դիրքից, սեռից և տարիքից, երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումների անմիջական մասնակիցն է։

Վերակառուցման առանձնահատկությունը սոցիալական անհրաժեշտություն ներկայացնող խնդիրների անվերապահ լուծման մեջ է, այսինքն՝ գործնականում մարքս-լենինյան տեսության մարմնացումն է, սոցիալական բոլոր խավերի հասարակական ակտիվացումը, նրանց մեջ սկզբունքայնության և քաղաքացիական համոզվածության դաստիարակումը։ Ըստ մարքսիզմ-լենինիզմի, հասարակական-տնտեսական բոլոր ֆորմացիաներում պատմության կերտողը և գլխավոր շարժիչ ուժը եղել և մնում են ժողովրդական զանգվածները։ Մարքսիստական դրույթն այսօր մեկ անգամ ևս իր հաստատումն է գտնում մեր հասարակության կյանքի ու գործունեության բոլոր ոլորտներում կատարվող արմատական վերափոխումների մեջ սովետական մարդկանց համատարած սոցիալական ակտիվության օրինակով, ուր նրանք հանդես են գալիս վերակառուցման գործընթացի մեջ և՛ ճարտարապետի, և՛ դերակատարի, և՛ հանդիսատեսի դերում։ Այսինքն՝ վերակառուցման վճռական գործոնը և նախագնացը սովետական մարդն է, նրանից է սկսվում ամեն մի փոփոխության մեկնարկ, նա է ստեղծում հասարակական ամեն մի արժեք։

Տնտեսության, գաղափարախոսության, քաղաքականության, գիտության և մշակույթի բնագավառների դանդաղ, բայց նկատելի բարեփոխումների մեջ այսօր զգալի որակական աճ է ապրում աշխատավոր լայն խավերի արտադրական գործունեությունը՝ նրանց նախաձեռնությունը, նպատակասլացությունը, աշխատանքային ակտիվության արդյունավետությունը, քաղաքացիական պատասխանատվությունը։ «Մեր ամեն մի պլան օդում կախված կմնա, եթե այն անտարբեր թողնի մարդկանց,— նշում է Մ. Ս. Գորբաչովը,— եթե մենք չկարողանանք արթնացնել մասսաների աշխատանքային ու հասարակական ակտիվությունը, նրանց նևանդն ու նախաձեռնությունը։ Հասարակությունը շրջել դեպի նոր խնդիրներ, դրանց լուծմանը նպատակամղել ժողովրդի, յուրաքանչյուր աշխատավորական կոլեկտիվի ստեղծագործական պոտենցիալը՝ այսպիսին է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու ամենաառաջին պայմանը»[3]։

Հասարակությունը որպես սոցիալական օրգանիզմ պայմանավորված է մարդով, նրա ակտիվությամբ՝ նրա էական ուժերի դրսևորմամբ։ Վերակառուցման արգի փուլն օբյեկտիվորեն պահանջում է բարոյական բարձր հատկանիշներ ունեցող անհատներ, որոնք կարող են իրենց բարեխիղճ ու արդյունավետ աշխատանքով նպաստել սոցիալական պրոցեսների օրինաչափ փոփոխությունների զարգացման արագացմանը և կարճ ժամանակաընթացքում երկիրը հասցնել սոցիալական ու տնտեսական զգալի նվաճումների։

социально-экономического развития страны, Минск, 1987; Личность и общество в условиях совершенствования социализма, Смоленск, 1985; Перестройка: проблемы, поиски, находки, М., 1987; Т. И. Ойзерман, Стратегия ускорения: философские и социологические проблемы («Вопросы философии», 1986, № 11); А. Яковлев, Достижение качественно нового состояния советского общества и общественные науки («Коммунист», 1987, № 8); А. А. Овсепян, Социально-философские проблемы воспроизводства общественных отношений, Ереван, 1986; Духовный мир современного человека, М., 1987; Ц. А. Степанян, Диалектика становления коммунистической формации, М., 1985; Человек в системе общественных отношений, Л., 1987; Е. П. Поликанова, Социальная активность как категория исторического материализма, М., 1986; XXVII съезд КПСС: творческий вклад в марксистско-ленинскую теорию, М., 1986 и т. д.

3 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը Սովետական Միության Կոմունիստական Կուսակցության XXVII համագումարին, Երևան, 1986, էջ 144։

Սովետական մարդու քաղաքացիական դիրքորոշումը ձևավորվում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների ներգործությամբ. և նրա ակտիվությունը ստանում է համապատասխան օրինաչափ ընթացք։ Անհատի ակտիվության հասարակական-քաղաքական էությունն առարկայանում է վերակառուցման փուլի ներկայացրած առանձնահատուկ պահանջների և գործողությունների մեջ, անկախ այն բանից, թե դրանք սոցիալական ինչ մակարդակ են ներկայացնում։ Տեղին է հիշատակել Վ. Ի. Լենինի խոսքերը, երբ նա գրում է. «Հասարակական կյանքի շեշտակի անցումների և փոփոխությունների ժամանակ ամենադժվար հարցը ամեն մի անցման առանձնահատկությունը հաշվի առնելու հարցն է... Եվ մեզ վրա դրվող խնդրի ամբողջ դժվարությունը, քաղաքականության ամբողջ դժվարությունը և ամբողջ արվեստն այն է, որ հաշվի առնենք յուրաքանչյուր այդպիսի առանձնահատուկ խնդիրները»[4]։

Սովետական մարդու վերափոխիչ սոցիալական դերը պայմանավորված է ոչ միայն իր կյանքի ու գործունեության բնույթով, այլև հասարակական բնույթին վերաբերող բոլոր հարաբերություններով, որպես առանձնահատուկի և համընդհանուրի դիալեկտիկական ամբողջություն։ Կ. Մարքսը դրում է, որ «...Մարդու էությունն առանձին անհատին հատուկ վերացություն չէ։ Իր իրականությամբ այդ էությունը հասարակական բոլոր հարաբերությունների ամբողջությունն է»[5]։

Մարդու քաղաքացիական դիրքորոշումը միայն ընտանիքում, մանկապարտեզում և դպրոցում ստացած դաստիարակչական գործունեությամբ չի ավարտվում։ Այն մարմնավորվում, կոնկրետանում և ամրակայվում է օբյեկտիվ պայմաններում, որն է՝ սոցիալական միջավայրը, ներառյալ՝ մարդկային հոգևոր միջավայրը, այսինքն՝ հոգածությունը կոնկրետ մարդու, նրա կոնկրետ պահանջների և դիրքորոշման համար։ Այդօրինակ նպատակային դրույթի իրականացումը կարմիր թելի պես անցնում է ՍՄԿԿ ապրիլյան (1985 թ.) պլենումի նշած և ՍՄԿԿ XXVII համագումարում հաստատված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման կոնցեպցիայում, համամիութենական կուսակցական XIX կոնֆերանսի նյութերում և կուսակցական մյուս փաստաթղթերում։

Անհատի ակտիվության գաղափարը պատմափիլիսոփայական մտքի կարևոր նվաճումն է, որը մատերիալիստական հիմքի վրա իր հետագա զարգացումը ստացավ Կ. Մարքսի կողմից։ Մարքսիզմ-լենինիզմը հաստատելով դետերմինիզմի նոր ըմբռնումը և դիալեկտիկորեն զուգորդելով անհրաժեշտության և ազատության պրոբլեմը, ընդունեց մարդկային գործունեության նպատակադիր ակտիվության օբյեկտիվ օրինաչափությունը, և պրոբլեմին տրվեց սկզբունքորեն նոր լուծում։ Անշուշտ, պրոբլեմի մատերիալիստական ըմբռնումը մեզ համար աշխարհայացքային և մեթոդաբանական ելակետ կծառայի տեսական ու գործնական տեսանկյունից, վերակառուցման փուլում սովետական մարդկանց քաղաքացիական ակտիվությունը հնարավորության սահմաններում ներկայացնելու իմաստով։ Հասարակական մասշտաբով կատարվող վերափոխումների արդի փուլում սովետական մարդկանց թեպետ դանդաղ, բայց սոցիալական նոր որակների ձևավորումը վկայում է նրանց հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման մասին։

Երկրի առջև ծառացած հսկայածավալ խնդիրների լուծումը կուսակցությունը կապում է աշխատավորական լայն խավերի ստեղծագործական ակտիվության, այսինքն՝ մարդկային գործոնի դերի բարձրացման հետ։ ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության մեջ նշվում է. «Սոցիալիստական հասարակությունը չի կարող արդյունավետ գործել, չգտնելով կյանքի բոլոր ոլորտներում մասսաների ստեղծագործական գործունեության նոր ուղիներ։ Որքան մասշտաբային են պատմական նպատակները, այնքան կարևոր է տնտեսատիրոջ նման

---

4 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 126։

5 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 3։

միլիոնավոր մարդկանց շահագրգռված, պատասխանատու, գիտակից և ակտիվ մասնակցությունը դրանց իրագործմանը»[6]։

Մարդկանց համատարած ներգրավումը վերակառուցման գործի մեջ նշանակում է ռեալ հնարավորություն ընձեռել մասսայական ակտիվության բարձրացմանը՝ սոցիալիզմի առավելությունների խելացի օգտագործման առումով։ Մարդու ակտիվության չափանիշը որոշակի գործերն են, խոսքի և գործի ներդաշնակությունը։ Վերակառուցման պահանջն ավելի հրատապ է և ավելի նպատակային. աշխատավոր մարդը դառնում է կառավարման և՛ օբյեկտը, և՛ սուբյեկտը, որը պայմանավորված է կառավարման գործին ոչ միայն միլիոնների մասնակցության զուտ քանակական իմաստով, այլև վերջնական արդյունքով՝ որակական կողմով, այսինքն՝ կառավարման մեջ անհատի սոցիալական դերի ու դիրքի բարձրացումով։ Ինչ խոսք, ծրագրային այս խնդիրը իր հետևողական լուծումն է ստանում ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարումն ավելի ճկուն իրականացնելու դեպքում։ Դրա համար նախատեսվում է առաջիկայում ստեղծել այնպիսի պայմաններ, որ օրըստօրե ընդլայնվի վերակառուցման սոցիալական բազան և միաժամանակ թե՛ խորությամբ ու թե՛ լայնությամբ ծավալվի սոցիալիստական դեմոկրատիան։

Քաղաքացիական ակտիվությունը վերացական ըմբռնում չէ, այն նյութականանում և իմաստավորվում է մարդու բարեխիղճ, նվիրված հանրօգուտ աշխատանքի, սոցիալ-տնտեսական զարգացման արագացման կոնցեպցիայի իրականացմամբ։ Քաղաքացիական ակտիվության հակոտնյան իներտությունն է։ Երկուսն էլ ցույց են տալիս պրակտիկ և հոգևոր գործունեության մեջ մարդու վճռականության և հաստատակամության աստիճանը։ Անշուշտ, անհատի ակտիվությունը սոցիալիզմի պայմաններում ելնում է առանձին մարդու և ժողովրդի շահերի ներդաշնակությունից։ Կ. Մարքսը ակտիվությունն անվանում է գործունեության առանձին տեսակ, այնպիսի տեսակ, որն իրականացվում է գործող անձի սեփական նախաձեռնությամբ և հավասարանշանակ է ինքնագործունեությանը։ «Առանձին մարդկանց, դասակարգերի, սոցիալական խմբերի գործողություններում և այլնի մեջ որոշիչը ոչ միայն գործողությունն է, այլև դրա գաղափարական իմաստը,— գրում է Ե. Պոլիկանովան։— Հետևաբար, հաճախ այդ աստիճան դրսևորվող ակտիվությունը չի հանգում արտաքին դրսևորման, որը երբեմն չափավորում է այս կամ այն գործողությունը և այնուամենայնիվ հանդես է գալիս որպես սոցիալական ակտիվության դրսևորում, եթե այդ չափավորումը բացահայտում է անհատի հարաբերությունը շրջապատող իրականության նկատմամբ»[7]։

Մարդու ակտիվությունը միշտ էլ ուղղված է աշխարհի վերափոխմանը, նյութական և հոգևոր պրոցեսների զարգացմանը, հասարակական հարաբերությունների կատարելագործմանը, որը հասցնում է մարդու գիտակցության և աշխարհայացքի ձևավորմանը։ Աշխատանքային ակտիվությունը, մեծացնելով և խորացնելով անհատի ինքնագործունեության ծավալման չափերը, միաժամանակ կատարելագործում է նրա սոցիալական էությունը։

Սովետական մարդու ստեղծագործական ակտիվության վերելքի և ինքնագործունեության փաստական առաջընթացի մասին է խոսում այն, որ XII հնգամյակի երկու տարվա ընթացքում արտադրված ազգային եկամտի աճի տեմպերը կազմեցին 6,7%։ Հասարակական աշխատանքի արտադրողականության աճը ժողովրդական տնտեսության մասշտաբով ամբողջությամբ կազմեց 6,5%, իսկ արդյունաբերության գծով՝ 8,8%։ Գործող ձեռնարկությունների վերակառուցման և վերազինման տեխնիկական բաժինը շինարարական արտադրության ընդհանուր ծավալի մեջ հասավ 46%-ի՝ XI հնգամյակի 35,6%-ի համեմատ[8]։

---

6 ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը, Երևան, 1986, էջ 196։

7 Е. П. Поликанова, նշվ. աշխ., էջ 51։

8 Տե՛ս «Коммунист», 1988, № 1, с. 15.

Կյանքը միշտ եղել և մնում է որպես տեսության ու պրակտիկայի անխզելի միասնություն, փոխադարձ կապ, որի պահանջն այսօր ավելի շատ է զգացվում վերակառուցվող սոցիալ-տնտեսական պրոցեսների դիալեկտիկական զարգացման իմաստով։

Վերակառուցման գաղափարական մակարդակը, նրա վերնաշենքային մասը, ամենից առաջ բնութագրվում են նրանով, թե որքանով է իրական պրակտիկան հենվում գիտականորեն հիմնավորված տեսության վրա և որքանով է լուսաբանվում տեսականորեն և ելնում տեսությունից։ Ինչպես գրում է Վ. Ի. Լենինը, «առանց հեղափոխական տեսության չի կարող լինել նաև հեղափոխական շարժում»[9]։ Լենինյան դրույթի մեթոդաբանական նշանակությունն ավելի արդիական է հնչում հեղափոխական վերափոխումների ներկա փուլում։ Բազմաթիվ բարդ խնդիրների լուծման անհրաժեշտությունն առաջին պլան է բարձրացրել սովետական մարդու ակտիվ դիրքորոշման, նրա մատերիալիստական աշխարհայացքի ձևավորման հարցերը։ Առանց այդ գործոնների ակտիվացման հնարավոր չէ կուսակցության գաղափարադաստիարակչական աշխատանքի հաջողություն և նրա քաղաքականության ուժի նպատակասլացություն։

Վերակառուցման գլխավոր սուբյեկտի՝ սովետական մարդու հոգևոր աշխարհն արտացոլվում է նրա բարձր զարգացած սոցիալական ինքնագիտակցության մեջ։ Այստեղ է բեկվում նրա թե՛ աշխարհայացքային, թե՛ գաղափարական, թե՛ կուլտուրական և թե՛ քաղաքացիական դիրքը, ձևավորվում նրա սոցիալական կերպարը։

Ակտիվության անհրաժեշտ պայմանը կոմունիստական գիտակցության ձևավորումն է, մարքս-լենինյան աշխարհայացքային դիտելիքների հետևողական յուրացումն ու կիրառումը գործնականում։ Անշուշտ, մարքս-լենինյան տեսության հիմնավոր ուսումնասիրությունը մարդու ինքնագիտակցությունը բարձրացնելու հետ զուգընթաց նպաստում է նրա բարոյաքաղաքական աճին, գիտական աշխարհայացքի սկզբունքների վերածմանը համոզմունքի, հասարակական-քաղաքական գործունեության ակտիվացման ու նոր սկզբունքների ձևավորման։ Դեռ ավելին, վերակառուցման բախտը կախված է մարքս-լենինյան աշխարհայացքի բազմակողմանի ու խոր ըմբռնումից և ժողովրդականացումից, հասարակական-քաղաքական կյանքում կոմունիստական գաղափարների հաստատումից։ Միաժամանակ այն վճռական դեր է խաղում հասարակական և անհատական գիտակցության զարգացման մեջ, որից էլ մեծապես կախված է սոցիալիստական հասարակության կյանքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումների հաջողությունը։ Թ. Օյզերմանը գրում է, որ «արտադրության ոլորտում է միայն հաշվի առնվում հասարակական բոլոր հարաբերությունների բազմազանությունը, բազմազանություն, որը սոցիալիզմի պայմաններում մարդկային հարաբերությունների անհամեմատ ավելի լայն ոլորտ է ընդգրկում, քան կապիտալիզմի օրոք, երբ սոցիալիստական արտադրական հարաբերությունները փոխվում և զարգանում են։ Անհրաժեշտ է դրանք փոխել գիտակցաբար և պլանաչափ ձևով, միաժամանակ կատարելագործել արտադրողական ուժերի զարգացման համապատասխան հասարակության նյութատեխնիկական հիմքերը՝ դրանց զարգացածության, հասունության մակարդակով հանդերձ»[10]։

Առավել բարդ խնդիրների իրացումը հանգեցնում է մարդու հասարակական դիրքորոշման բարձրացման, մարդկային գործոնի դերի աճի։ Կուսակցությունը հանդես է գալիս գիտակցական գործոնի գլխավոր և ամենաակտիվ կրողի դերում, որի նպատակը սովետական մարդկանց գաղափարական, կրթական և մշակութային մակարդակի բարձրացմանը զուգընթաց նրանց քաղաքացիական դիրքորոշման ակտիվության ձևավորումն է։ Գիտակից, քաղաքա-

---

9 Վ. Ի. Լենին, նշվ., հ. 6, էջ 30։

10 Т. И. Ойзерман, նշվ. հոդվ., էջ 29։

կան բարձր կուլտուրայով, բարեխիղճ և հեռատես անհատի ձևավորումը սոցիալիզմի իդեալն է, որի իրականացումը հնարավոր է միայն տնտեսական, կազմակերպական, գաղափարական և այլ գործոնների արդյունավետ զարգացման պայմաններում։

Վերակառուցման առանձնահատկությունը անհատի հասարակական-քաղաքական դերի բարձրացումն է, սոցիալական պրոցեսների ինտենսիվացումը և սոցիալական մեխանիզմի անխափան աշխատանքը։ Սովետական մարդն իր բազմակողմանի ակտիվությունը դրսևորում է գործնականում զգայական-առարկայական գործունեությամբ, որի հիմքում ընկած է հասարակության նյութական-արտադրական փոխգործունեությունը։ Պրակտիկան շարժման յուրահատուկ սոցիալական ձև է, որի էությունը հասարակական հարաբերությունների անընդհատ վերափոխումն է։ Դրան համապատասխան սոցիալական պրակտիկայի առարկայական բնույթի հետևանքով տրամաբանական մտածողության օբյեկտիվ ընթացքը արտացոլում է բնության հետ մարդու առարկայական փոխգործողության բազմակողմանի ձևերը, իսկ դրանց միջոցով հենց իր՝ բնության մեջ գոյություն ունեցող կապերի ընդհանուր ձևերը։

Հասարակական գործերում սովետական մարդկանց մասսայական ակտիվությունը սոցիալիզմի կառուցման օրինաչափությունն է։ Ժամանակն է մարդկանց մեջ սերմանել նոր խնդիրների բնույթի և հասարակական էության ըմբռնման պահանջ, կայուն մատերիալիստական աշխարհայացք, սկզբունքայնություն, պատասխանատվության և կարգապահության ճշմարիտ որակներ։ Կուսակցության հրատապ պահանջն է աշխատանքային բոլոր տեղամասերում բարձրացնել մարդու սոցիալական հասունության աստիճանը՝ նրա գիտակցության ձևավորումը։

Մեր գաղափարախոսության հումանիզմի և բարոյականության ակունքը եղել և մնում է մարդը. նրանից է սկսվում ամեն մի բարոյական քայլ և ավարտվում է նրանով։ Գործի բովանդակության չափանիշը մարդն է։ Մարդը պարտավոր է պարբերաբար իր մեջ ձևավորել մարդկային գեղեցիկ հատկությունների և հարաբերությունների ձևավորման ու կատարելագործման պահանջ, որի անհրաժեշտությունն այսօր առավել շատ է զգում մեր հասարակությունը։ Վստահությունը, մարդկանց փոխադարձ հարգանքը սոցիալիստական ապրելակերպի կարևոր գծերից են։ Կուսակցության կողմից գիտականորեն հիմնավորված արագացման ստրատեգիայի մեջ բարձր է հնչում անհատի արժեքի և արժանապատվության նկատմամբ ցուցաբերվող հարգանքը՝ որպես վերակառուցման անառարկելի պայման և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերի արագացման հիմնական գործոն։ ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան պլենումում Մ. Ս. Գորբաչովն ասաց. «...Ինչ դիրքերից էլ որ մենք մոտենանք մեր էկոնոմիկայի, մշակույթի, սոցիալական ու հոգևոր կյանքի զարգացման ուղիների որոշմանը, վճռական գործոնը միշտ կլինի մարդն ինքը, նրա քաղաքական ու ինտելեկտուալ կերպարը, նրա վարպետությունը, նրա հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը, ստեղծագործելու նրա ընդունակությունը, նրա քաղաքացիական դիրքորոշումն ու ակտիվությունը»[11]։

Յուրաքանչյուր անհատի արժանապատվությունը բնորոշվում է անձնական որոշակի հատկանիշներով, քաղաքացիական դիտակցությամբ, մասնագիտական պատրաստվածությամբ, ընդհանուր բարօրության համար ստեղծագործաբար աշխատելու կարողությամբ՝ քաղաքացիական դիրքորոշմամբ։ Բարոյական բարձր հատկությունները, սկզբունքայնությունը և նպատակասլացությունը ձևավորվում են կյանքի ողջ կացութաձևով, հասարակական գործերի համաչափ տեմպով։ Այսինքն՝ բարեխիղճ աշխատանքը, խնայողությունն ու կարգապահությունը գնալով վերածվում են սովետական մարդու կյանքի բարոյական նորմայի, երբ նա գիտակցում է մի պարզ ճշմարտություն, որ

11 «Սովետական Հայաստան», 19. II. 1988։

բոլորը և ամեն մեկն աշխատում են և՛ իր, և՛ հասարակության շահերի համար։

Դիտատեխնիկական հեղափոխության արդի պայմաններում, երբ հասարակության կյանքում ավելի ինտենսիվորեն է աճում գիտության դերն ու նշանակությունը, վերակառուցումն օբյեկտիվորեն ներառում է մարդկային գործունեության բոլոր առաջին հերթին արտադրողական ուժերի ոլորտը։ Հետևաբար, այն չի կարող անմիջականորեն չազդել անհատի ակտիվ կենսագործունեության նկատմամբ ներկայացվող պահանջների փոփոխությունների վրա։ «Այդ փոփոխությունները,— գրում է Վ. Մոսկալենկոն,— վերաբերում են անհատի կողմից սոցիալական փորձի յուրացման չափին։ Հասկանալի է, որ հասարակության պատմական զարգացման, նրա սոցիալական կառուցվածքի բարդացման, հասարակության կողմից անհատի սոցիալական հատկությունների նկատմամբ աճող պահանջների հետ միասին աճում է նաև ժամանակը, որն անհրաժեշտ է սոցիալականացման այն նվաղագույն աստիճանի համար, որը թույլ կտար նրան ներգրավելու սոցիալ-վերափոխիչ, գործուն, ակտիվ կյանքի մեջ»[12]։

Սովետական մարդու քաղաքացիական ակտիվությանը բնորոշ է բազմակողմանի, բարոյական բարձր հիմքը, որը պայմանավորված է հասարակական ընդհանուր կուլտուրայի զարգացման մակարդակով և սոցիալիստական ապրելակերպի անբաժան գիծն է։ Այսօր ավելի անհրաժեշտ է անհատի առանձնացվող ակտիվություն, որին բնորոշ է այնպիսի հստակ կենսադիրք, որն անմիջականորեն ուղղված է դանդաղկոտության, սպասողականության, քաղքենիության, լճացածության, մտածողության հին ստերեոտիպերի, այսինքն՝ վերակառուցմանը խանգարող բացասական բոլոր երևույթների դեմ։

Քաղաքացիական ակտիվությունը լայնորեն դրսևորվում է արտադրական կոլեկտիվներում մարդկանց աշխատանքային հմտությունների և ունակությունների աղատ ու անկաշկանդ օգտագործմամբ։ Հոկտեմբերյան հեղափոխության 70 ամյակի առթիվ իր զեկուցման մեջ Մ. Ս. Գորբաչովը նշեց. «Հեղափոխական մաքրման և վերածնման մեր հույսը անհատի, մարդկային գործոնի ակտիվացման միջոցով սոցիալիզմի հսկայական սոցիալական ռեսուրսները բացահայտելն է»[13]։

Խոսելով սոցիալիստական հասարակության մեջ մարդկանց գիտակցական գործունեության օբյեկտիվ հետևանքների մասին, Դ. Կոզլովը գրում է. «Սոցիալիստական հասարակության մեջ մարդկանց գիտակցական, նպատակադիր գործունեության օբյեկտիվ հետևանքներն ավելի հաճախ են բախման մեջ մտնում նրանց մտադրությունների հետ։ Այս հասարակության մեջ մարդը ստեղծածի և իր կողմից ստեղծվելիքի ստրուկը չէ։ Տեխնիկայի օգտագործումը նպաստում է աշխատաժամանակի կրճատմանը և ազատ ժամանակի ավելացմանը, մարդկանց ընդունակությունների ու հմտությունների բազմակողմանի զարգացմանը։ Նոր կոնկրետ բովանդակությամբ են համալրվում անհատի բնականոն գործունեության այնպիսի անհրաժեշտ ուղղությունները, ինչպես մասնագիտական, հասարակական-քաղաքական, բարոյական և ֆիզիկական զարգացումն է»[14]։ Քաղաքացիական ակտիվության ձևավորումը օբյեկտիվ պրոցես է։ Իր հոգևոր հարստությամբ, սուբյեկտիվ դրսևորմամբ, սովետական մարդու կշռադատված, հետևողական մասնակցությունը վերակառուցման գործին ենթադրում է մատերիալիստական աշխարհայացքի հիման վրա գիտելիքների ու գաղափարների ձևավորում և կատարելագործում։

---

12 В. В. Москаленко, Социализация личности, М., 1986, с. 80.

13 Մ. Ս. Գորբաչով, Հոկտեմբերը և վերակառուցումը. հեղափոխությունը շարունակվում է, Երևան, 1987, էջ 42։

14 Д. Ф. Козлов, Изменение социальных функций и особенности форм общественного сознания (Общественное сознание в условиях совершенствования социализма. М., 1986, с. 63).

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման կոնցեպցիան ՍՄԿԿ-ի կողմից հետապրիլյան շրջանում մշակված հեղափոխական վերակառուցման տեսությունն ու քաղաքականությունն է, նոր խոսք կոմունիստական տեսության և պրակտիկայի ասպարեզում։ Արդի փուլում սովետական մարդը, առաջնորդվելով մարքս-լենինյան տեսության ստեղծագործական զարգացումով, շարունակում է հեղափոխության գործը՝ վերակառուցումը, հասարակական կյանքի բոլոր ոլորտների նորացումը։ Նորի որոնումն այսօր ամենուրեք օրգանապես շաղկապվում է մարքս-լենինյան տեսական և քաղաքական հիմնադրույթների՝ մասսաների կենդանի ստեղծագործության հետ։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև սովետական մարդկանց կողմից առանց սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղիների մշտական հայտնաբերման և լուրացման հնարավոր չէ սոցիալիստական հասարակական հարաբերությունների զարգացում[15]։

Պրակտիկայի մարքս-լենինյան ըմբռնումը թույլ է տալիս տեսականորեն վերաիմաստավորել ոչ միայն տեսության և պրակտիկայի դիալեկտիկական փոխհարաբերությունը, մարդու զգայական-առարկայական և իդեալական գործունեությունը, այլև բացահայտել իրականության նկատմամբ նրա գործնական և տեսական հարաբերության իմաստը։ Մարդու ակտիվությունն ուղղված է դեպի կոնկրետ օբյեկտը, որի գոյությամբ էլ պայմանավորված է մարդու վերափոխող գործունեությունը, որը միաժամանակ խթանում և պահանջ է առաջացնում դեպի նոր գործունեության և այդպես անընդհատ։ Օբյեկտիվ պայմանի և սուբյեկտիվ գործոնի հարաբերակցության ճիշտ ըմբռնումը նպաստ կդառնա նաև ճիշտ բացատրելու սովետական մարդու ստեղծագործական դերը երկրի սոցիալական ու տնտեսական արմատական վերափոխումների արդի գործընթացում։

Քաղաքացիական ակտիվությունը միաժամանակ հանդես է գալիս իբրև մարդու ազատ ստեղծագործելու պայման և հետևանք։ Ազատ լինել, առաջին հերթին, նշանակում է հնարավորություն ունենալ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում օբյեկտիվ տրամաբանությանը համապատասխան հետևողականորեն դրսևորելու սոցիալական հասուն և դասակարգային հստակ դիրքորոշում։ Հետևաբար, անհատի քաղաքացիական դիրքորոշման ակտիվությունը կարելի է քննել նաև հենց իր՝ անհատի, որակական հնարավորություններին համապատասխան, որոնք ևս բնորոշվում են հասարակական հարաբերություններով և հասարակության զարգացման կոնկրետ պահանջներով։

Զարգացման և նորացման սկզբունքը միշտ էլ հատուկ ուժով գործել է բնապատմական օրինաչափությամբ ու շարունակում է գործել հասարակության անցումային փուլերում, երբ զգալիորեն ակտիվանում է մարդկանց գիտակից և նպատակասլաց գործունեությունը, այսինքն, երբ զարգացման արդի փուլին բնորոշ են ավելի ինտենսիվ ու ավելի բուռն հակասություններ, որոնց լուծումը պահանջում է մասսայական գիտակցության վերելք և քրտնաջան աշխատանք։ «Դեռ մեզ շատ անգամ հարկ կլինի ավարտելու, վերակերտելու, սկզբից սկսելու,— ուսուցանում է Վ. Ի. Լենինը։— Արտադրողական ուժերի և կուլտուրայի առաջընթաց, վերընթաց զարգացման յուրաքանչյուր աստիճան, որ կհաջողվի մեզ, պետք է ուղեկցվի մեր սովետական սիստեմի կատարելագործումով ու վերակերտումով»[16]։

Ուրեմն սովետական մարդու քաղաքացիական ակտիվության չափանիշը նրա նախաձեռնած կոնկրետ գործերն են, գրանցում սոցիալիստական համընդհանուր շահի դրսևորումը, որոնք էլ ընկած են հասարակական հարաբերությունների հիմքում, օբյեկտիվորեն ձևավորում ու զարգացնում են այդ հարաբերությունները։

---

15 Տե՛ս Ա. Ա. Հովսեփյան, Հասարակական հարաբերությունների վերարտադրության սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմները, Երևան, 1986, էջ 66։

16 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 269։

ГРАЖДАНСКАЯ АКТИВНОСТЬ СОВЕТСКОГО ЧЕЛОВЕКА— РЕШАЮЩИЙ ФАКТОР ПЕРЕСТРОЙКИ

Г. Ш. МОКОЯН

Резюме

Идейно-теоретическая направленность гражданской активности советского человека предполагает раскрытие механизма действия и использование материальных, социальных и духовных возможностей реального социализма в деле формирования нового человека.

Характерной особенностью гражданской активности социалистической личности является ее высокая трудовая и общественно-политическая целеустремленность. Эта особенность обусловливается единством общественных и личных интересов на данном этапе перестройки.

Совокупность объективных условий развивающегося социализма является средой, формирующей гражданскую позицию личности, и стимулирует активное отношение советского человека к действительности, воспитывает его как творца, созидателя.